ԼՈՒՅՍԻ ՈՒԽՏԱՎՈՐԸ

Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի 1995 թ. լույս տեսած բանաստեղծական հատընտիրին 1997 թ. շեմին հաջորդեց «*Ուխտագնացություն դեպի լույսը*» գիրքը, որն էլ յուրօրինակ հանրագումարն ու գրական անդրադարձն է հեղինակի տասնամյակների հոգևոր գործունեության: Եթե Ներսես սրբազանի՝ գրական անվամբ՝ Ներսես Վանականի բանաստեղծական գործերում միշտ ներկա է հոգևորականը, Հայ Եկեղեցու սպասավորը, որը բանաստեղծական ձևի մեջ է ներկայացնում իր հոգևոր մտածումներն ու խորհրդածությունները՝ գրական-գեղարվեստական լիցքեր ստանալով մեր ժողովրդի ու Եկեղեցու պատմության ոգեշունչ էջերից, ապա այս նոր գրքում էլ հոգևորականի քարոզխոսական տողերում ընթերցողին շարունակ ուղեկցում է բանաստեղծը՝ գեղարվեստական ինքնօրինակ մի դրոշմ հաղորդելով գրքի էջերին: Այն բացվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջաբանով: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքի խոսքում շեշտում է հատկապես հիշյալ իրողությունը՝ գրելով, որ Ներսես սրբազանն այս հատորյակով «*նոր տարածք մը կավելացնե իր գրական բեղուն վաստակին: Բանաստեղծական արվեստով ցարդ արտահայտված գրչի այս սպասավորը, կրոնական-հոգևոր, կրոնագիտական-եկեղեցագիտական, սուրբգրական և բարոյագիտական ու նաև ազգասիրական խոկումներով, խորհրդածություններով, վերլուծումներով, գիտելիքներով սնդավորված հատոր մըն է, որ այս անգամ կմատուցե իր ժողովրդին*»:

Կառուցվածքային առումով էլ գիրքն այն յուրահատկությունն ունի, որ տարբեր տարիների քարոզները ոչ թե բերված են ժամանակագրական ընթացքով, այլ խմբավորված համաձայն մեր Եկեղեցու օրացույցի, շնորհիվ որի այս հատորը դարձել է մերօրյա յուրօրինակ մի տոնախոսական ժողովածու՝ ընդգրկելով Ծննդյան Ճրագալույցից մինչև Խաչվերաց ձգվող շրջանը, ներառելով նաև ազգային-եկեղեցական կյանքի տարբեր նշանակալից իրադարձություններ ու դրվագներ:

1996 թ. Գարեգին Ա Կաթողիկոսն առաջին անգամ օրհնեց սրբալույս Մյուռոնը որպես արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ հայոց լույս հավատի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Երջանկահիշատակ Վազգեն Ա-ից հետո կատարված առաջին այս մյուռոնօրհնությունը եկավ մեկ անգամ ևս հավաստելու մեր ժողովրդի հոգևոր ընթացքի անընդհատականությունը, և այս օրհնությունը դարձավ տարվա խորհուրդը, որին նվիրված խորհրդածությամբ էլ սկսվում է Ներսես սրբազանի հոգևոր մտածումների այս ժողովածուն. «*40 օր Մեռոնի կաթսան Մայր Տաճարի սրբազնասուրբ Խորանի վրա դրվեց, այնտեղ ամենօրյա պաշտամունքներով, աղոթքներով, շարականների երգասացությամբ օրհնվեց, և այսօր Ամենայն Հայոց Հայրապետը, նվիրապետական մեր Աթոռների թեմական առաջնորդների հետ. օրհնեց նոր Մեռոնը և սրբացրեց այն: Նրանք իրենց աղոթքներով երկնքից հրավիրեցին Սուրբ Հոգուն, որպեսզի Նա իջնի Մեռոնի կաթսայի մեջ, ջերմացնի այն, Իր շնորհները թողնի այնտեղ, շնորհներ, որ պիտի*

տարածվեն աշխարհով մեկ, ուր իր թևերը կարողացել է երկարել Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին՝ այն հեռու-հեռու հորիզոններում»:

Այս խոսքին այնուհետև հաջորդում է «Սուրբ Մեռոն» բանաստեղծությունը, որում Մյուռոնի հայության հոգևոր դրոշմ լինելը և Սուրբ Հոգու շնորհաբաշխ զորությունը կրելը խտացված են հետևյալ տողերում.

Օրհնյալ կաթսա՝ Սուրբ Մեռոնով առլեցուն,
Քողասքողյալ վեհ աղավնի, Սուրբ Հոգի,
Կանգնել է Սուրբ, կենդանարար Խորանում,
Ուսկից պիտի համայն հայոց բաշխվի:

Նույն կերպ մյուս քարոզներին ու խոսքերին ևս մեկական բանաստեղծություններ են հաջորդում, որոնք կամ տվյալ տոնի բանաստեղծական անմիջական արձագանքն են, ինչպես Ծննդյան Ճրագալույցին՝ «Խոհ Ծննդյան», Հարության Ճրագալույցին՝ «Առ հարուցյալն», «Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնին» նվիրված «Սուրբ Էջմիածին», «Տոն Վերափոխման Սուրբ Աստվածածնին»՝ «Տիրամայր» չափածո գործերը, և կամ էլ ներքին հոգևոր թեմատիկ ընդհանրությամբ են կապվում օրվա խորհրդին: Այսպես, Ծաղկազարդի՝ Քրիստոսի Երուսաղեմ մուտքին նվիրված քարոզին հաջորդում է «Երուսաղեմ» բանաստեղծությունը, Երևման Սուրբ Խաչի տոնին՝ «Պատվերը», որը ծառ տնկելու մի գեղեցիկ հորդոր է և բանաստեղծական գծված զուգահեռով տնկվող ծառով խորհրդանշում է խաչի՝ կենաց փայտի, որով կյանքը նորոգվեց, գաղափարը:

Կյանքի դաժան ցուրտ օրերին
Ծառն արև է՝ լույս պարգևող:
Ծառն արվեստ է, նուրբ ձեռքերով
Հյուսված երգ է՝ սեր նվագող:

Այս առումով հատկանշական է Արտաքման կիրակիի քարոզին հաջորդող «Սրբերի Սուրբն ես» բանաստեղծությունը: Օրվա խորհրդին՝ Ադամի Դրախտից վտարվելուն նվիրված քարոզում շեշտելով մեր Եկեղեցու հայրերից մեզ ավանդված այն միտքը, որ մեր մեղքերը կարող ենք քավել և Ադամի երանական կյանքին արժանանալ պահեցողությամբ, զղջմամբ, ապաշխարությամբ ու ողորմածությամբ, այնուհետև Արտաքման կիրակիի խորհրդից բխող այն ըմբռնումը, թե Ադամով կորցրածը Քրիստոսով ենք գտնելու, քարոզին հաջորդող այս բանաստեղծությունում հնչում է որպես առ Աստված ուղղված մի խնդրանք-հորդոր.

Սրբերի սուրբն ես անաղարտ, մաքուր,
Մեղավոր անձիս վերքերն ամոքի՛ր,
Չար խորհուրդներից իմ միտքն ազատի՛ր,
Մաքրության քողով դու ինձ պարուրի՛ր:

Քարոզների մեծ մասը նվիրված լինելով կիրակի օրերին կատարվող տերունական ու եկեղեցական նշանավոր տոներին, նաև իրենցում ներառում են տվյալ շաբաթվա մյուս տոները ևս, ինչպես, օրինակ, «Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնի» դեպքում հիշվում են շաբաթվա նախորդող օրերի տոները, իսկ Վերափոխման ժամանակ՝ նաև Շողակաթի տոնը:

Ներսես սրբազանի տոնախոսական այս քարոզներին բնորոշ է նաև մի շատ կարևոր հանգամանք. ազգային-եկեղեցական տոների և դրվագների մասին խոսելիս դրանք միաշաղախում է համամարդկային ու համաքրիստոնեական հասկացություններին, իսկ վերջիններիս ու ընդհանուր եկեղեցական պատմության հետ հարաբերվող տոների մասին խոսելիս դրանք զուգահեռի մեջ է դիտում հայկականի հետ:

Գրքում առանձին մի խումբ են կազմում կրոնագիտական բնույթի խորհրդածությունները և այն քարոզներն ու խոսքերը, որոնք կապված են սրբազան հոր հոգևոր գործունեության տարբեր դրվագների ու տարեդարձների հետ, որոնցից 1986 թ. արքության պատվին արժանանալու առիթով խոսքը նաև հոգևոր մի ինքնախոստովանություն է անցած ու անցնելիք ճանապարհների եզրագծում. «*Այսպես տարիները սահեցին: Այս տարվա (986 թ. - խմբ.) հունիսի 5-ին անդրադարձա, որ արդեն 25 տարի է, ծառայում եմ Հայ Եկեղեցուն իբրև հոգևոր սպասավոր: Հետադարձ մի հայացքով իմ հովվության և առաջնորդության տարիները հիշեցի, և սիրտս լցվեց գոհունակությամբ և խինդով, թեև, անկեղծ լինելու համար, պետք է ասեմ, որ ունեցել եմ նաև դառն ու ծանր օրեր:Հիշեցի հովվական ծառայության տարիներին հայ ընտանիքներին իմ կատարած այցելությունները, ուրախ և տխուր առիթներով, այցելություններ հիվանդացոցներ, ծերանոցներ, բանտեր, դպրոցներ և ակումբներ, հիշեցի ազգային զանազան հանդիսությունների առիթով տված իմ հորդորները, եկեղեցում ամեն կիրակի օր խոսած իմ քարոզները: Այս բոլորով ես փորձել եմ բախել իմ խնամքին հանձնված հոտի հոգու դռները, լցնել նրանց սրտերը մեր նախնյաց հավատով և ապագայի պայծառ տեսիլքով, հոգեպես կապել նրանց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և հայրենի ծաղկուն մեր իրականությանը*»:

Ծննդյան վաթսունամյակի շեմին հոգևոր արդյունաշատ գործունեության և ստեղծագործական հաջողությունների երկար-երկար տարիներ մաղթենք լույսի ուխտավորին՝ Ներսես սրբազանին, հավատալով, որ լույսի աղբյուրը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նորանոր լուսեղեն ցոլացումներ է պարգևելու Սրբազան Հորը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ